



Ա.Ս. Պոկճյան



891.71
9-98







LIBRARY OF THE

UNIVERSITY OF CHICAGO

1101 E. 58th St. Chicago, Ill. 60637



А.С.Пушкин

ЦЫГАНЕ



Г О С И Ы Д А М

891.71

7-97

19 NOV 2010

Ա.Ս.ՊՈՒՇԿԻՆ

22 JUN 2007

ԳՆԶՈՒՆԵՐ




Ե Ը Գ Զ Ծ Կ



23 JUL 2013

13053



34199-62

Գ Ե Ջ Ո Ւ Ն Ե Բ

Բեսարարիայում—խուռն աղմուկով
Անդադար քոչում են գնչուները:
Յեվ ահա այսօր, մի գետակի քով,
Ննջել են, խփած հին վրանները:
Ուրախ ե նրանց իջևանն ինչպես
Ազատությունը՝ Բունը անխռով
Բաց յերկրնքի տակ, ուր վոր գորգերով
Ծածկած սայլերի անիվների մեջ
Կրակ են վառել ու շուրջը նստած
Վողջ ընտանիքը ճաշ ե պատրաստում:
Ձիերն արածում են անյեղձ դաշտում:
Ձեռնածու արջը ահա լուռ պառկած
Վրանի յետև, առանց շղթայի:
Աշխույժ ե հնչում տափաստանների
Միջում ամեն բան:—Յեվ ընտանեկան
Հոգսերով մարդիկ, վորոնք առավան


Ծագից դեռ առաջ ճամբորդեն պիտի
Յեվ յերգը կանանց, և՛ ձիւն մանկանց,
Յեվ զըրընդոցը շարժական սալիւն
Բայց արդ՝ տիրում է այդ թափառական
Խմբին խոր քնի անդորրությունը.
Յեվ տափաստանում լսվում են միայն
Ձիու խրխինջ ու շան կլանչյունը:
Շուրջը հանդիստ է, ինչպես գերեզման,
Կրակը հանգչում գետակի ափին.
Լուսավորում է լուսինը միայն
Յերկնի բարձունքից—թափառախմբին:
Բայց մի վրանում չի քնել մի ծեր,
Նստած է հանգչող կրակի առաջ.
Տաքանում նրա ջերմությամբ վերջին,
Յեվ լուռ՝ ծանրացած միտքը սեփեփել
Նայում է դաշտին՝ մուժի մեջ սառած:
Նրա մանկամարդ դուստրը մի հատիկ
Գնացել է դաշտ—մենակ ման գալու,—
Սովոր է ազատ, համարձակ կյանքի:
Կվերադառնա—Բայց արդ՝ ուշ և լուռ —
Խորին գիշեր է—Թողնում է ցրտին
Լուսինն ամպերին հեռու յերկընքի:

Զեմֆիրան, սակայն, դեռ չի յերևում,
Սառչում է խղճուկ ճաշը ծերուկի:

Բայց ահա և նա: Յետեկցն ահա
Մի յերիտասարդ մարդ է շտապում,
Ծերուկ գնչուին անծանոթ է նա:
«—Հայրիկ, ասում է աղջիկը խնդուն,—
Մեզ հյուր եմ բերում,—յես գտա նրան
Տափաստանի մեջ, բլուրի վրա.
Հրավրեցի իջևանը մեր,
Ուղում է մեզ պես նա գնչու լինել.
Նա խուլս է տվել որենքի ձեռքից,
Կդառնամ նրան ընկերուհի յես,
Նրան Ալեքո անուն են տալիս.
Ուր վոր մենք գնանք՝ կհետեի մեզ»:

Ծերուկի

Ուրախ եմ: Թող նա մինչ եզուց մնա
Հովանու ներքո մեր խեղճ վրանի.
Կամ թե՛ ավելի, թե սիրտ կուռենա:
Ինչպես ուղում ես: Այդպիսի բանի՝
Պատրաստ ե—հացըս, ոթեանն իմ հին,



Դարձիր դու մերը, վարժվիր լսեղծության
Յեւ ազատ կյանքին, շրջմովիկ բախտին:
Մնա մեզ մոտ միշտ: Իսկ առավոտյան
Ճանապարհ կընկնենք մեր մի սայլակով.
Բայց քեզ զործ ե պետք, գնա, մտածիր,
Կամ յերկաթ ծեծիր, կամ յեղիր յերգող,
Կամ թե գյուղեգյուղ արջը ման ածիր:

Ալեքո

Կնամ ձեզ մոտ:

Զեմֆիրա

Նա բնա ե, բմը

Եւ ձվ կարող ե ինձանից խել:
Բայց ուշ ե արդեն... Մատաղ լուսինը
Ծածկելվեց, մութը դաշտերն ե կոխել:
Քունը ինձ արդեն հաղթահարում ե:

Լույս ե: Ծերը լուռ շրջում ե անվերջ
Դեռ քնածների վրանների մոտ:
«— Վեր կաց, Զեմֆիրա, արևը ծագեց,

Դեռ ել վեր կաց, հյսւր, լույս ե, առավոտ,
Վեր կացեք, վորդիք, փափկության
մահճից»:

Յեւ դուրս են թափվում ամենքն
աղմուկով—

Հին վրանների լուռ-թան միջից.
Յեւ սայլակները՝ պատրաստ իրար քով,
Իրար հետ հանկարծ նետվում են առաջ,
Կտրում ամայի դաշտերը անծիր.
Յերևխաներին եշերը առած,
Խուրջիներին մեջ բաց, ինչպես կծիկ.
Ամուսին, չեղբայր, կանայք, աղջրկերք,
Յեւ ծեր, և մանուկ մեկտեղ, սրտախինդ,
Ծիծաղ, աղաղակ, գնչույական յերգ,
Արջի մոնչուն, շղթայի շոխդ,
Անհամբեր շարժում ու զընգուն ձայներ,
Նախշուն քուրջերը հագած ու կապած —
Կիսամերկ ծերեր ու ժիր մանուկներ,
Հաջոց ու ձայնը զրույցի կամաց,
Սայլերի ճախնչ, և ամենը աչս
Խառնիխուռն, անկարգ և աններդաշնակ,
Բայց այնքան ուրախ, կենդանի ու պարզ,

Յեվ այնքան ոտար՝ մեր մեռած, անկյանք
Սրտին՝ աչդ ոտար տոնը ցնծալի,
Վոնց ստրուկների չեղզը տաղալալի:

Յերիտասարդը նետում ե աչքը
Դեպի դիմացի դաշտերը ամա—
Յեվ իր տխրության դադտնիքը անլուր
Չի կարող պարզել ինքը իր համար:
Այժմ իր հետն ե սեաչ Զեմֆիրան,
Այժմ ազատ մարդ ե ինքն աշխարհում.
Յեվ իր վերևում արեն անվարան
Կետրվա շքեղ շուքով ե փայլում:
Ինչո՞ւ յե սիրտը դողում վշտավառ,
Ի՞նչ հոգս ե նրան ճնշում դադտնաբար:
Թռչունն չերբեք չի իմանում
Հոգնություն ե հոգս անմար.
Յեվ խնամքով նա չի հշուտում
Մշտական բույն իր համար.
Ու ննջում ե ծառի վոստին,
Ի՞նչ փույթ թե պարտք ե մեկին,
Ու յերգում ե նա վերստին—

Արեգակի վառ ծեգին,
Հաջորդում ե սիրուն գարնան
Ամառ այրող ու կիզիչ.
Բերում ե մութ ու շունչը ձյան—
Ուշ աշունը ավերիչ.
Մարդկանց համար խիստ տխուր ե,
Յերբ թռչուններն հեռանան,
Չվեն տաքուկ յերկրները,
Մինչև գալուստը գարնան:
Յեվ ինչպես անբույն թռչունը անհոգ
Նա—աչդ թափառիկ չվողը անտուն
Չունեն իր բույնը, ե չունեն վոչ վոք,
Յեվ վոչ մի բանի նա չեր հաստատվում.
Բաց եյին ճամբեք միշտ նրա առաջ,
Ամենուր նա իր քնատեղն ուներ.
Զարթնում եր միշտ վաղ, դեռ ծեգը հառած,
Որն իր դարձրում աստվածանվեր.
Կյանքի տագնապը չեր ել խռովում
Նրա սրտի այն մեղկությունը մեղմ,
Ու մերթ կախարդող փառքի նման ջերմ,
Հեռավոր աստղն եր նրան գրավում.
Յերբեմն փայլը մեծաճոխ կյանքի—

Հուրհրատում եր աչքերում նրա.
Քիչ չեր պատահում, վոր հուր կայծակի
Ամպը չգողար չոր գլխի վրա.
Բայց անտարբեր եր նա և՛ շանթի դեմ,
Յեւ արեւի տակ—հանգիստ եր քնում.
Ապրում եր ազատ և չեր ընդունում
Իշխանութունը կույր բախտի դժխեմ:
Բայց, ո՛ր, ատուած իմ, նրա հետ՝ անհազ
Վճնց ելին խաղում կրքերը ուժգին.
Վճնց ելին յեռում մաշված կրծքի տակ,
Կատաղի թափով ծիրան, անհանգիստ:
Թվում ե յերկար կմնան հանգած:
Վճչ, կտեսնես դու—կզարթնեն հանկարծ:

Զեմօրա

Ասա, իմ ընկեր, չե՞ս ավստում դու—
Ինչ վոր թողել ես մի ուր մշտապես:

Ալեքո

Ի՞նչ եմ թողել յես:

Զեմօրա

Հասկանում ես դու,—
Քաղաքն ու քեզ միշտ հարազատ մարդուն:

Ալեքո

Ի՞նչը ավստամ: Դիտնայիր թե վոր
Յերեակայել, հասկանալ մի ուր
Ստրկութունը այդ քաղաքների,
Ուր ցանկապատված բլուր մարդիկ անհոգ,
Չուրկ առավոտյան զովից թանկագին.
Կարոտ մարդերի կենարար բույրի,
Ուր սիրո հաճար ամաչում են լոկ,
Ծախում են և՛ միտք, և՛ ազատութուն,
Յերկրպագում են չնչին կուռքերի,
Յեւ փողով միացն շղթա յեն գնում:
Ի՞նչ եմ թողել յես:—Դավաճանություն,
Դաժան ամբոխի անմիտ հալածանք,
Խայտաճամուկ ու խայտառակ մի կյանք.
Տխմար ամբոխի հոտը պլպլան:

Զեմօրա

Բայց այնտեղ կան մեծ տուն ու ապարանք,

Նախշուն գորգեր կան այնտեղ— քաղաքում—
Խնձուշք, կերուխում, խաղ ու խրախճանք,
Աղջըկանց զարդեր հարուստ, գույնզգույն:

Ալեհո

Ի՞նչ ե քաղաքի խինդը—բարեկամ,
Վորտեղ սեր չկա՝ չիք ե խնդություն:
Իսկ աղջիկները... Դու հազար անգամ
Նրանցից սիրուն, գեղեցիկ ես դու—
Առանց մարգարտի, առանց մանյակի:
Մի փոխվիր, հոգիս: Դու լսվ ես այսպես,
Իսկ յեւ... Ձեմ ուզում վոչինչ կրկնակի.
Լոկ մի իդձ ունեմ՝ միայն սիրել քեզ,—
Մոռանալ ժամերն իմ աքսորանքի...

Փերուճի

Դու սիրում ես մեզ, ծնված ես թեկուզ
Ժողովրդի մեջ ազատ ու շուայլ.
Բայց ով ծնվել ե մեղկության գրկում՝
Ազատությունը չի սիրի յերկար:
Պահվում ե մեր մեջ ավանդություն մի,
Վոր մի չար արքայ աքսորեց մեզ մոտ

Հարավից մի մարդ¹, (Բայց անունն հիմի
Իմաստուն մարդու այն սիրակարոտ՝
Ձեմ մտաբերում, գիտեյի առաջ):
Թեպետ ծեր եր նա,—տարիքը առած,
Բայց զվարթ եր միշտ և հոգով անբիծ,
Նա ունեւ իր մեջ ձիւրք կախարդական,
Ու ձայն՝ կարկաչուն աղբյուրի ձայնից.
Նրան ամենքը սիրեցին այնքան:
Մենակ ապրում եր Դանուբի ափին
Յեվ չեր նեղացնում վոչ մեկի, այսպես,
Պատմում եր շքեղ հեքյաթներ անդին
Յեվ միամիտ եր յերեսացի պես.
Յերեսացի պես թույլ եր ման գալիս,
Յեվ նրա համար և ձուկ, և գազան
Ուրիշներն եյին վորսում ու տալիս:
Յեվ յերբ սառչում եր դետը գազադած,
Սուլում, մորնչում մրրիկը ձմռան,
Մարդիկ գազանի մորթիով իսկույն
Ծածկում եյին այդ ծերին սրբազան:
Բայց չեր հաշտվում կյանքի հետ անգույն.
Յեվ թափառում եր աղքատ ու նիհար,

1) Պուշկինն ակնարկում ե հոռոմեացի հռչակավոր
բանաստեղծ Ովիդիոս Նազոնին:

Նա ասում էր, թե աստվածը հզոր
 Պատժել է իրեն մի մեղքի համար...
 Յեվ մնում է դեռ փրկության հուսով:
 Բայց միշտ տխրագին ու տրտում ու խեղճ,
 Դանուբի ափին, ծանր մտքերով,
 Լուռ թափառում էր—արցունքն աչքի մեջ,
 Իր հայրենիքը մտաբերելով:—
 Յեվ նա կտակեց մեռնելու ժամին՝
 Վոր տանեն վոսկերքն—իր հայրենական
 Հարավի հողում թաղելու մի որ:
 Վորոնք չպիտի հանգիստ մնային
 Ոտար աշխարհում այս անհյուրընկալ:

Ալեքս

Այդպես է բախտը քո վորդիներին,
 Ո՛ր, Հոսմ, ո, մեծ, հաղթական յերկիր:
 Դու աստվածների ու սիրո յերգիչ:
 Ասա ինձ, ասա իմաստը փառքի,—
 Շիրմի խուլ թնդյուն, կամ հալարտություն—
 Վորը սերնդից սերունդ է անցնում,
 Յեվ կամ թե ծխով լցված վրանում
 Վայրի գնչույի պարզուկ պատմություն:

Յեկու ամառ անց: Թափառումներով
 Անցնում է գնչու բաղմուլթյունը միշտ
 Յեվ ամենուրեք գտնում է սիրով
 Հյուրասիրություն ու քաղցր հանգիստ,
 Արհամարհելով լուսավորության
 Ամեն մի կապանք, Ալեքոն անոգ
 Ապրում է որերն իր պանդխտության
 Գնչուների պես անցավ ու անհոգ:
 Դարձել է նա մի կատարյալ գնչու:
 Յեվ վոչ ցավում է և վոչ ափսոսում
 Ներկա շրջմուխի որերն իր անգին:
 Նույնն է, չի փոխվել, և նրանց միջում
 Ջի հիշում նույնիսկ որերը նախկին,
 Սիրում է նրանց գիշերն անհուզում,
 Հրապուլները ծույլ գնչուների,
 Նրանց աղքատիկ, բայց հնչուն լեզուն,
 Սիրում է արջին իր բնից փախած,
 Վրանի սովոր այդ բրգոտ հյուրին,
 Վոր ստեպների ճամպի յեղերքին
 Մուլավ գյուղերի մոտերքում, առաջ՝
 Յեղում է ծանր իր արջապարին:—
 Ու մոռնում է ձայնով ահալի,

Կրծելով անվերջ շղթան ձանձրալի:
Կռթնած ճոկանին իր ճամբորդական՝
Ջարկում ե ծերը չոր դափի վրա,
Ալեքոն՝ արջն ե պար ածում հլու,
Փողն հավաքում ե սեվաչ Զեմֆիրան,
Նրանցից, վորոնք սիրով են տալու:
Գիշերն հասնում ե, նրանք յերեքով
Նորհաս ցորենն են կրակին խաշում:
Քնում ե ծերը լուսթյան ներքո,
Անդորր ե չոքում վրանի մուգում:

Գարնան արևի ջերմության ներքո
Տաքացնում ե ծերն իր արյունը պաղ,
Աղջիկն յերգում ե որորոցի քով,
Ալեքոն պցում իր գույնը դանդաղ:

Զեմֆիրա

Իմ ծեր մարդ, անհղ մարդ,
Մորթիւր ինձ, այրիւր ինձ,
Չեմ վախում. յես հաստատ —
Վնչ սրից, վնչ հրից:

Քեզ շատ եմ յես ատում,
Քեզ արհամարհում եմ,
Ուրիշին եմ սիրում,
Սիրելով կմեռնեմ:

Ալեքո

Լռիւր: Քո յերգը զզվացնում ե ինձ,
Չեմ սիրում նման վայրենի յերգեր:

Զեմֆիրա

Չես սիրում: Ե, լնվ, մի սիրի, ինձ ինչ,
Յես ել միմիայն ինձ համար կերպեմ: —
Մորթիւր ինձ, այրիւր ինձ,
Վոչինչ չեմ ասի քեզ,
Իմ ծեր մարդ, անհղ մարդ,
Դժվար թե ճանաչես:

Թարմ ե նա և ըմբոստ,
Ամառ ե ու գարուն,
Ջահել ե ու խանդոտ,
Ինձ շատ ե նա սիրում:

Վսնց եյի շոյում յես
Նրան լուռ գիշերին,
Վսնց եյինք ծիծաղում
Քո ճերմակ մազերին:

Ալեքո

Լոբր, Զեմֆիրա, հերիք ե, լոբր:

Զեմֆիրա

Դու հասկացար իմ այս յերգի միտքը:

Ալեքո

Զեմֆիրա...

Զեմֆիրա

Կուզես բարկացիր:

Քեզ վրա լեմ լես յերգում այս յերգը:
(Գնում ե ե յերգում՝ «իմ ծեր մարդ» ե այլն):

Փեռուհի

Այդպես. այս յերգը հիշում եմ համառ,
Բայց ո՞վ հնարեց այս յերգը յերկրում,
Կյանքին զվարճանք, խինդ տալու համար

Մարդիկն այդ յերգը վաղժեց են յերգում:
Յերբ վոր Կագուլի տափաստանում լայն
Թափառում եյինք, ձմեռվա որով
Յերգում եր յերգն այս իմ Մարիսւլան,
Կրակի մոտ աղջկանս մեղմ որորեկով:
Իմ մտքի միջում տարիներն անցած
Ժամ առ ժամ մթնում, կորչում են անվերջ.
Բայց յերգն այս ահա վաղուց մնացած
Սորն ե նստել իմ հիշողության մեջ:

Շուրջը խաղաղ ե, լուսինը սիրուն՝
Զուգված բազմել ե կապույտ լազուրում.
Զեմֆիրան՝ քնած հորն ե արթնացնում.—
«—Ո՛, հայր իմ, վեր կաց, Ալեքոն քնում
Տես ինչպես ծանրը շնչում ե տնքում,
Յեվ հառաչում ե, և լուռ հեկեկում»:

Փեռուհի

Թող նրան հանգիստ, մի դաշիր նրան.
Մի ավանդություն կա հին, ռուսական,
Տնային վոդին գիշերումն արթուն՝
Սեղգում ե շունչը քնացող մարդու:

Յեզդեո չծագած լույսն առաջնորի՝
Փախչում ե իսկույն: Նստի՛ր ինձ մոտիկ:

Զեմօրա

Հայր իմ, լսի՛ր, իմ անհունն ե տալիս:

Ծերունի

Նա փնտռում ե քեզ նաև յերազում,
Աշխարհից նրան թանգ ես ավելի:

Զեմօրա

Սառել ե նրա սերն իմ սրտի մեջ,
Իմ սիրտը հիմա այլ տենչ ե հուզում:
Յես արդեն... Բայց դու չես լսում մի՛թե,
Ուրիշ անուն ե նա շրջում թեթև:

Ծերունի

Իսկ ում անունը:

Զեմօրա

Լսում ես նրա տնքոցն անհատնում,
Յեզդ առամների կրճըտոցը սուր,
Սարսափելի յե: Կարթնացնեմ իսկույն:

Ծերունի

Շատ իզմուռ:
Իզուր մի քշիր գիշերվա վողուն,
Ինքը կզնա:

Զեմօրա

Նա շուռ յեկավ, տես,---
Զարթնեց, կանչում ե իր մօտ, ահա յես
Գնում եմ: Քնի՛ր: Դե մնաս բարով:

Ալեհո

Դու՝ վթրտեղ եյիր:

Զեմօրա

Հորս մոտ եյի:
Շատ չարչարվեցիր դու այս գիշերով:
Ինչ վոր վողի քեզ տանջում եր կարծես,
Դու ինձ վախեցրիր: Քո առամները
Կրճըտում եյին: Ու լսեցի վոր,
Կանչում եյիր ինձ:

Ալեքո

Տեսա ահավոր

Յերազ քեզ վրա, իբր մեր միջև...

Ահավոր չերազ, և թոա քնից...

Զեմֆիրա

Մի հավատա դու սուտ յերազներին:

Ալեքո

Այն, չեմ հավատում չես վռչ մի բանի՝

Վռչ յերազներին, վռչ խոստումներին,

Յեւ չեմ հավատում անգամ քո սրտին:

Ծերուհի

Դու, յերիտասարդ. ասա, ինչո՞ւ չես

Տանջվում, հառաչում ամբողջ ժամերով.

Մարդիկ աղատ են, մեզ մոտ, տեսնում ես.

Պաշտոն յերկինք կա ու սիրուն կանայք:

Զճւր ե, կարողը մարդ ե կործանում:

Ալեքո

Հայր իմ, Զեմֆիրան ել ինձ չի սիրում:

Ծերուհի

Քեզ հանգիստ պահիր, նա մանուկ ե դեռ.

Զուր ես վրդովում քո սիրտը խաղաղ.

Դիտեմ, սիրում ես նրանից ավել,

Կինը սիրում ե սրտի հետ խաղալ:

Զվարթ հայացքով նայիր յերկնքին,

Այնտեղ շրջում ե լուսինը—ազատ,

Իր լույսն հավասար տալով ամենքին.

Յեւ աստղն ու ամպը նրան հարազատ:—

Տես, ամպին ահա աչքով ե անում,

Նրան զվարթուն փայլեր ե տալիս.

Հիմա ուրիշի խորքն ե նա դնում,

Այսպես փոխվելով՝ նա ման ե գալիս:

Միթե հնար ե լուսնին յերկնքում

Ասել թե՛ անշարժ մի կետում կանգնիր,

Ջահել աղջիկն ել այդպես ե կցանքում,

Նրան՝ թվ կասի թե՛ մեկին սիրիր:

Քեզ հանգիստ պահիր:

Ալեքո

Ինչպես եր սիրում:

Յեւ ինչ քնքշությամբ, ինձ խոնարհելով,

Խոր լռության մեջ, խաղաղ գիշերում,
իր սիրաբորբոք քչփչոցներով
Սեր եր խոստանում ինձ յերանելի.
Ինչպիսի ուրախ թոթովանքներով,
իր համբույրներով ջերմ ու դյուլթալի
Նա մի վայրկյանում գիտեր փաբատել
Վրաս ծանրացած և՛ վիշտ, և՛ թախիծ,
Հիմա Զեմֆիրան աչնպես է սառել
Յեվ իմ Զեմֆիրան ել չի սիրում ինձ:

Փերուցի

Լսիր, պատմում եմ քեզ համար մի հին
Իմ գլխով անցած դեպք սովորական.
Վաղժեց, շատ վաղուց, յերբ վոր Դանուբին
Ձեր սպառնացել Մոսկովն հաղթական,
(Տեսնում ես, ինչպես վերքս նորացավ
Յեվ սիրտս պատեց տխրություն ու ցավ),
Վախենում եյինք թուրքի սուլթանից,
Իսկ Բուջակ փաշան աչն ժամանակ դեռ
Աշտարակներինք Աքերմանի
Հսկում եր: Իսկ յես՝ վառվռուն ջահել,
Յեռում եր սիրտս: Իմ զլխի վրա

Ձկար և վոչ մի սպիտակած թել.
Յես ուրախ ելի և աչնքան ուրախ.
Յեվ ահա սիրուն կանանց մեջ հանկարծ
Հայտնվեց մեկը,—չքնաղ ու պայծառ,
Ինձ համար լույս եր նա արեգական,
Նա դարձավ կինըս, ու յերջանկացա:

Բայց, ավանդ, շտապ անցավ ինձ համար
Ջահելութունըս,—հանդչող աստղի պես:
Ա՛խ, դու, ո, քաղցր սիրո վառ վայրկյան՝
Թուար շատ շտապ:—Մի տարի միայն
Սիրեց ինձ կինըս—իմ Մարիոնան:

Մի որ կապույտան ջրերի վրա
Մենք հանդիպեցինք այլ գնչուների.
Ուրիշ գնչուներ խիեցին վրան
Սարի տակ, մեզ մոտ, մեր վրանների:
Մենք չերկոս գիշեր յեղանք միասին,
Յերբորդ գիշերը նրանք հեռացան.
Ծծկեր աղջկան թողնելով անսիրտ
Իմ Մարիոնան նրանց միացավ,—
Քնած եյի յես. լուսածեղին յերբ

Ձարթնեցի, տեսնեմ՝ կինըս կողքիս չի,
Փնտուում եմ, կանչում, ընկած քար ու
ծերպ,

Խեղդում ե արցունքն աղջըկաս,—խեղճին:
Յես ել լաց յեղա: Այդ ժամանակից
Կինը մեկից մեկ ընկալ իմ աչքից.
Այդ որվանից ել իմ մաքուր չանցալ
Մենակ ֆնացի ու չառա նոր կին,
Որերըս ազատ, միացնակ անցան:

Ալեքո

Բաց ինչո՞ւ համար չշտապեցիր դու
Այդ խաղախ մարդկանց յառեիցն իսկույն,
Բռնեցիր նրանց, մինչև դաստակը—
Սիրալ խրեցիր դաշուհնդ հատու:

Ծերունի

Ինչո՞ւ Ազատ են հալճերը ջահել:
Այն ի՞նչ ուժով ե սիրալ զսպըլում,
Հերթով ե տրվում ուրախությունն ել.
Յեղածը յերբեք ել չի կրկնվում:

Ալեքո

Յես այդպիսին չեմ: Յես առանց կուլի
Ձեմ հրաժարվի իմ իրավունքից.
Վրեժ կլուծեմ, ձեռք քաշած կյանքից,
Թեկուղ թշնամուս անդունդին ծովի
Քրած տեսնեմ յես—կգտնեմ նրան.
Յերգվում եմ, վոր իմ վոտքը կհրի
Իմ չար թշնամուն, և չի յերերա,
Կհրի ծովի խորքը ժանտալի:
Կհրի նրան: Յեմ սարսափը վողջ
Նրա զարթնումի կընդմիջեյի յես
Իմ ծիծաղովը չար ու դժներես.
Նրա անկումի թնդյունը ամբողջ
Ականջ կանեցի քեֆ անողի պես:

Ֆերիսասարգ գեչու

Թող ինձ, թող զոնե համբուրեմ մեկ ել:

Ջեմֆրա

Հերթ ե: Մարդս խանդոտ ե ու չար:

ԳԵՆՈՒ

Մի անգամ: Գեթ այս ըստանման համար:

ԶԵՄՔԻՐԱ

Հեռացիր, քանի մարդս չի յեկել:

ԳԵՆՈՒ

Ասա, չե՞րբ պիտի տեսնվենք նորից:

ԶԵՄՔԻՐԱ

Այսօր, յերբ ծագի լուսինն յերկընքում.
Բլուրի վրա, հին շիրմաքարին:

ԳԵՆՈՒ

Զի գալու, վնչ, վնչ, խաբում ե նա ինձ:

ԶԵՄՔԻՐԱ

Փախիր, ահա նա: Կգամ, սիրելիս:

Ալեքոն քնած տեսնում ե ահա
Անցնում են դեմից խառն յերազներ,

Ճշում ե մթնում, և ձեռքով իրա
Տեղն սկսում ե իրարով խառնել.
Բայց տարածած իր ձեռքը միմիայն
Ընկնում ե դատարկ վերմակի վրա,
Յեվ կողքին չկա կինը՝ Զեմֆիրան...
Նա վեր ե թռչում, ախանջ ե դնում
Սարսափով լցված: Շուրջը սառն ու լուռ.
Մարմնով անցնում ե տաք ու պաղ

սարսուռ.

Ապա վրանից շտապ դուրս գնում
Կատաղի դեմքով,—շուրջը սալերի
Վորոնում ե, բայց լճու ե ամեն ինչ.
Ամպի տակ մտավ և լուսինը ջինջ,
Միայն լույսի տակ աղոտ աստղերի
Տեսնում ե հեռքեր, վորը հեռանում,
Տանում ե ահա լուռ բլուրն ի վեր,
Յեվ նա գնում ե քայլով անհամբեր,
Ուր չարագուշակ հեռքերն են տանում:

Ճամբի յեզրին մի գերեզմանատեղ
Մպկտակին ե տալիս, և ահա
Հոգնած վոտքերը տանում են այնտեղ,

Նախագգացում սրտի մեջ պահած.
Ծնոտը կափկափ, ծնկները յերեր—
Գնում ե... Հանկարծ, յերանգ ե արդյոք,
Տեսնում ե անա ստվերներ մի զույգ,
Շշուկ ե լսում նա սիրաբորբոք
Ահա՛ շիրիմի վրա փառազուրկ:

Առաջին ձայն

Դե, ժամանակն ե:

Յերկրորդ ձայն

Դեռ կայ:

Առաջին ձայն

Հոգիս, հերիք ե:

Յերկրորդ ձայն

Վնչ, վնչ, մնա դեռ մինչև լուսաբաց:

Առաջին ձայն

Ո՛ւշ ե, հասկացիր:

Յերկրորդ ձայն

Վախով ես սիրում:

Մի վայրկյան միայն:

Առաջին ձայն

Ինձ կկործանես:

Յերկրորդ ձայն

Մի վայրկյան միայն:

Առաջին ձայն

Յեթե առանց ինձ

զարթնի իմ մարդը...

Ալեքո

Զարթնել եմ արդեն.

Ե՛յ, մի փախչի, կայ: Պետք էի շտապել.

Այս գերեզմանը շատ ե հարմար ձեզ:

Զեմճիրա

Փախիր, սիրելիս, շուտ, ազատիր քեզ:

Ալեքո

Կանգնիր:

Եյ, Տէր ես փախչում դու սիրուն ջահել:

Պառկիր:

(Դանակը խրում է նրա կուրծքը):

Զեմֆիրա

Ալեքո:

ՊԵՆՈՒ

Մեռնում եմ:

Զեմֆիրա

Դու սպանեցիր նրան, Ալեքո:

Դու թաթախված ես նրա արյան մեջ:

Ո, այս Բնչ արիր:

Ալեքո

Վոչի՛նչ:

Այժմ նրա վառ սերը շնչիր:

Զեմֆիրա

Վոչ, բավական է. չեմ վախենում յես:

Արհամարհում եմ սպառնալիքըդ:

Այս վոճրի համար — անիծում եմ քեզ:

Ալեքո

Մեռիր և ինքըդ:

(Սպանում է նրան)

Զեմֆիրա

Կմեռնեմ սիրելիսդ:

Արեւելքն արդեն բացվում է շիկնոտ,
Ալեքոն, սակայն, այն կողմը բլրի,
Զեռքի մեջ պահած դաշույնն արյունոտ,
Մենակ նստած է տապանաքարին:
Իր առաջն ընկած դիակ կա յերկու,
Մարդասպանի դեմքն՝ ահ ունի լոին,
Իսկ գնչուներին պատել է յերկյուղ,
Կանգնել են վոմանք՝ հուղմունքով խորին,
Վոմանք յերկուսի շիրիմն են փորում,
Սգաձայն լացով անցնում են կանայք
Յեվ մեռածների աչքերն համբուրում:

Միայն ծերունին նստել ե մենակ
Նայում իր սիրած անշուշտ աղջկան՝
Լուռ անշարժության խորունկ թախիժով,
Մարդիկ դիակներն ահա վեր առան
Հողին հանձնեցին խորին կսկիծով:
Ալեքոն նրանց նայում եր հեռվից:
Յերբ վերջին հողը թափվեց փոսի մեջ,
Նա լուռ վեր կացավ իր նստած տեղից,
Բայց մի քայլ չարած՝ անուժ գլորվեց
Խոտերի վրա՝ տապանաքարից...
Այնժամ ծերունին խիստ՝ ասավ այսպես, —
«— Թող մեզ, գոռոզ մարդ, գնա, հեռացիր,
Մենք վայրենի չենք, որենք չկա մեզ,—
Վոչ սպանում ենք, վոչ կապում, կախում,
Պետք չէ մեզ արյուն, ու ձայն տնքոցի:
Մարդասպանի հետ ապրել չենք ուզում:
Դու ազատ կյանքի համար չես ծնվել,
Յերբ ուզում ես դու լոկ ազատ լինել:
Սարսափ կրերի քո ձայնն այսուհետ.
Մենք վախկոտներ ենք, բայց հոգով բարի:
Դու չար, համարձակ: Հեռացիր, թող մեզ,
Դե մնաս բարով: Գնա, տեր ընդ քեզ:

Ասաց ծերունին և աղմուկներով
Թափառախումբը վեր կացավ արագ
Սարսափի հովտից իսկույն քոչելով,
Ու կորավ հեռվում, մշուշների տակ.
Միայն մի սալլակ մնաց իր տեղում
Անշարժ, ծածկված քրքրված գորգով.
Որհասի՝ գալիք վտանգի ներքո.
Անպես, ինչպես վոր ցուրտ մառախուղում,
Ձմեռից առաջ ու խոնավ, ու թե՛ն
Ուշ աշնան դաշտից բարձրանում ե վեր
Կոռնկի յերամն աղաղակներով,
Վերահաս ցրտի բերան մնացած,
Ու չվում դեպի մշտաջերմ հարավ,
Թողնելով մենակ, խոցված կապարով,
Մեկն իր յերամից—թե՛վը քաշ արած:
Հասավ գիշերը, և մութ սայլի մոտ
Չկար վոչ մի մարդ, վոր կրակ աներ,
Չկար վոչ մի մարդ, վոր մինչ առավոտ
Նրա ծածկի տակ տեսներ յերազներ:

ՎԵՐՋԵՐԳ

Իմ մշուշապատ հիշողության մեջ,
 Յերգի կախարդող հղորությամբ լի...
 Կենդանանում են տեսիլներ անշեջ
 Մերթ պայծառ ու մերթ թախծոտ որերի:
 Այն ցերկրում, ուր վոր պատերազմական
 Ահեղ թնդյուն կար ու խոլ աղաղակ,
 Ուր վոր տիրակալ ձայնը ոռոտական
 Հասնում եր մինչև Ստամբուլ քաղաք,
 Ուր վոր հին արծիվը յերկզլխանի
 Ալմըկում եր և փառքով փաղփաղում՝
 Հանդիպեցի յես տափաստանների
 Վրայից անցած բանակատեղում
 Խաղաղ սայլերին խեղճ գնչուներին,—
 Աղատության այդ մեղմ զավակներին:

Բայց ցերջանկություն չկա և ձեր մեջ,
 Ո, դժբ ընության խղճուկ զավակներ,
 Յեվ ձեր տրորված վրաններին մերձ
 Ապրում են միայն տանջող յերազներ.
 Յեվ հարկերը իսկ ձեր թափառական

Ձերժ չեն փորձանքից չար ու անողոր,
 Ամենուր կրքերն են որհասական,
 Յեվ բախտի զարկից՝ ազատ չի վոչ վոք:

1824




Թարգ.՝ Ս. Տաբոնցի
Պատ. խմբագիր՝ Ա. Վշտունի
Տիտղոսաթերթը՝ Հ. Շափարյի
Տեխ. խմբագիր՝ Լ. Ոհանյան
Սրբադրե՛ն՝ Ա. Արզաքանյան



Հրատ. 3964

Գլավ. լիտի լիազոր Կ—4464,
Պատվեր 1532, տիրած 3000

Հանձնված է արտադրության 14 դեկտ., 1936 թ
Ստորագրված է տպագրելու 2 հունվարի, 1937 թ.
Պետհրատի տպարան, Յերեվան, II Կոռնյանցի, 4



ՀՀ Ազգային գրադար



NL0303945

45